

## ԲԱՆԱԿԱՆ Գ. ՏՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ-ՔԱՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ. ԼՐԻԴԻ ՎԵՐՋԻՆ

Լուսիդանիոյ . Ա' ողջէ ,  
Ուաճա Ո' ալենանայ ադամանդնէրը .  
Ուուսաց Ա-գաւորական գաւադանին վըստէ  
ադամանդը . Փէ՛լ ըսուած ադամանդը , ևն :

ՅԱՑՑՆԻ է որ 36 քառաթի կամքիչ  
մը աւելի արժեք ունեցող ադամանդնե-  
րը տամանդին աւելի չեն . իսկ խիստ  
խոշոր ադամանդ բոլոր լրւոպայի մէջ  
հազիւթէ վեց հատ կը գտնուի : Չբա-  
նուած ադամանդներուն մէջ ամենէն  
խոշորն է Պիրականցայի թագաւորական  
ադամանդը՝ որ 1680 քառաթի կամիրը  
11 ունի կը կշռէ . բայց ուրիշները ա-  
նիկայ Ճերմակ տպագինն կը կարծեն :  
Ի՞ն ադամանդին վրայ մէկը աս ստոյգ  
աւելեկութիւնը կուտայ : Լրոր լ ուսի-  
տանիոյ թագաւորութեան մեծ իշխա-  
նը ( որ ետքը Յովհաննէս չորրորդ ը-  
սուեցաւ ) 1808 Պիրագիլ հասաւ , Ո' ի-  
նամանդերայս գաւառէն սև ամերիկացի մը  
իրեն թուղթ մը գրեց , աղաչելով որ  
ինքը անձամբ բերէ իշխանին իր գտած  
ադամանդը : Խագաւորը հրամայեց մեծ  
զօրավարին որ ան հնդիկը պահապան  
զօրքով իր առջեւը հանէ : Հնդիկը քա-  
նի մը ամիսէն բերաւ ադամանդը թա-  
գաւորին տուաւ , ըսելով թէ Պիրագիլի  
մէջ ինչուան հիմա ասկէց մեծ ադա-  
մանդ չէ գտնուած : Խագաւորն ալ ի-  
րեն փոխարէն ազատութիւն ու մինչեւ  
ի մահ իրեն և իր ընտանեացը թոշակ  
կապեց : Խնքը այսպէս կը ստորագրէ  
ան ադամանդը . միմնագոյն դեղնորակ  
է կ'ըսէ , հաւու հաւկըթի մը մեծու-  
թեան չափ , երկայնաձեւ , և մէկ կողմը  
քիչ մը խոր : Պիրագիլի ոսկերիչները ի-

1 Աս ադամանդը ութը կողմն ունի . և 17 1/2  
քառաթի կը կշռէ :

բեք հազար միլիոն ուշալ արժեցուցին ,  
որ իրեքհարիւր միլիոն լիրէ ստերլինի  
հաւասար է . մէկ կողմը միայն քիչ մը  
բանուած է՝ ունեցած յատկութիւննե-  
րը փորձելու համար :

Ձաւէռնիէ գաղղիացին Ո' ողոլի ա-  
դամանդը կը յիշէ որ անտարակոյս խիստ  
խոշորներէն մէկն է . գոյնը գեղեցիկ  
վարդի գունովէ , ձեւն ու մեծութիւնը  
հաւու հաւկըթի մը կիսուն չափ . Ձաւ-  
էռնիէ կշռեր է աս ադամանդը ու  
297  $\frac{9}{16}$  քառաթ , կամ 860 ցորենաշափ  
գտեր է . և Ճեֆէրիի կանոնին նայե-  
լով 624,962 լիրէ ստերլին կ'արժէ :  
Ծիկայ 1550 Պիէնկալայի մէջ՝ Յոլորի  
հանքերուն մէջէն գտնուեր է :

Հիսուն տարի աւած Պոռնէոյ կղզիին  
մէջ ադամանդ մը գտնուեր է հաւկը-  
թաձև , որուն սուր ծայրը պղտիկ խո-  
ռուչ մը ունի . ասոր ջուրը սքանչելի է . և  
367 քառաթ է կշռոքը : Իսկէց շատ  
տարի աւած Պաթաւիոյ հազարապետը  
ուզեց գնելան ադամանդը . ուստի Պոռ-  
նէոյի թագաւորին՝ որ Ուաճա Ո' թ-  
ան կ'ըսուէր՝ մարդ խրկեց ու խոս-  
տացաւ 150,000 թալէու , երկու մեծա-  
մեծ ու զինեալ պատերազմի նաւեր ,  
շատ մըն ալ վառոդ ու գնտակ , Ի՞այց  
կ'երեւնայ թէ ուաճան յանձն չէ ա-  
ռած ծախել , չուզելով զսկել իր ազգա-  
տոչ մը այնպիսի գանձէ մը . վամն զի  
Ո' ալայեցիք մողերնին դրեր էին որ ե-  
թէ ան ադամանդը ջրի մէջ խոթես ,  
ու ան ջուրը հիւանդին խմցընես , հի-  
ւանդը կը բժշկուի . և դարձեալ՝ իրենց  
ազգին բազգը բոլոր անոր վրայ հաս-  
տատուած կը կարծեին :

Ուուսաց թագաւորական գաւազա-  
նին ադամանդը՝ երկար ատեն Ճնդ-  
կաց միականի կուռքի մը աչքին տեղն  
էր . ասկէց շատ տարի աւած իւլանտա-  
ցի զինուոր մը աս ադամանդը կուռքին  
աչքէն փրցընելով ոչինչ գնով մը ծա-  
խեց : Շատ մարդու ձեռքէ անցաւ և  
ետքը Ինդղիա գնաց բանուելու . ատեն  
անցնելէն ետքը կ'երեւնայ թէ իյատա-  
րինէ Ուուսաց կայսրուհին 1775 Պիս-  
դերտամ՝ աս ադամանդը գներ է իննը-

սուն հազար լիրէ ստերլինի , վրան աւելցընելով չորս հազար լիրէ ստերլին տարեկան տուրք . մեծութիւնը՝ աղաւնիի հաւկըթի չափ է , և ձեւ հաւկըթածե տափարակ , և բոլորավին անարատ և անբիծ . 179 քառաթի կշիռք ունի :

Փիթ կամ լյուանակը ըստած աղամանդը՝ իտավասի անունով ասպետը գնեց | ատրաս քսան հազար չորս հարիւր լիրէ ստերլինի . շտկելու կոկելու համար 5,000 լիրէ ստերլին ծախք եղաւ վրան , և անկեց ելած մանրուքները 7 , կամ 8,000 լիրէ ստերլին արժեցին : ( ) ու էանի դուքսը , | ու գովիկոս ծեւ թագաւորին ոստիկանը կամ խնամակալը , 1717<sup>th</sup> աս աղամանդը 135,000 լիրէ ստերլինի գնեց . 136  $\frac{1}{4}$  քառաթի է կշիռքը . իսկ գինը 1791<sup>th</sup> սակերիչներէն ու մանք 12 միլիոն լիրէ ստերլինի արժեցուցին : | չ աղամանդը գրեթէ ամենեկին պակասութիւն մը չունի . Պաղղիոյ ամենէն ընտիր գոհարն է , բոլոր աշխարհիս մէջ ալ ամենէն գեղեցիկը կը սեպուի , թէպէտ և մեծութեամբը ամենէն վեր չէ : Պաղղիոյ թագաւորները իրենց թագին վրայ զրեր էին ասիկայ , բայց Պափոլէն իր թրին կոթին վրայ անցընել տուաւ . Լարողոս ժ ետեկ էր որ իրեն սեփականէ աս աղամանդը և Պաղղիոյէն քշուած ատենը հետար տանի , բայց չյաջողեցաւ :


| ցամանդը իրաւցընէ տեսակ մը հարստութիւն է որ թէ տեղէ տեղ տանիլը դիւրին է , և թէ գնոյն աւելնալու կամ պակսելու վտանգներէն ազատ է : Լյաւեն թէ Լէյէզ անունով Ճարպիկ մարդ մը Շրուտիոյ թագաւորին առջեւ անանկ Ճարտարութեամբ մը ցրցուց աս աղամանդը ու պայծառ երեցուց որ թագաւորը խոստացաւ 40,000 ձի՝ իրենց ամէն սարօքը տալ Պաղղիոյ թագաւորին ան աղամանդին համար : Կ աղամանդը , ինչպէս որ ըսինք , Վալաքքայի մէջ Լոլգոնտայի տերութեան

Հոչակաւոր հանքերէն գտնուեցաւ • Ձեւ գրեթէ կը է , մէկ մատնաչափ լայնք ունի , 1  $\frac{1}{6}$  մատնաչափի երկայնութիւն , և մէկ մատնաչափի  $\frac{3}{4}$  մաս հաստութիւն : Ալ պատմեն թէ գերի մը գտեր է աս աղամանդը , և ոտքին ողպին մէջ վէրք մը բացեր ու մէջը պահեր է . բայց շատ մեծ եղած պիտի ըլլայ ան խոցը որ կարենար մէջը ծածկել ան աղամանդը : Լ'երենայ թէ աս ան աղամանդին է՝ որուն համար ֆիթ ասպետը որ գներ էր՝ սուտ տեղը ամբաստանուեցաւ իբր թէ խաթէութեամբ յափշտակեր է :

Կ քարը բանելու համար 5,000 լիրէ ստերլին ծախք եղեր է , և Շեֆէրիէս 135,000 լիրէ ստերլինի ծախուեցաւ կ'ըսէ . փայլունութեանը կողմանէ ամենէն ընտիրներէն մէկը կը սեպուի : Ո'էկ բիծ մը միայն ունի եղեր , ան ալ ակնակապիչի մէջ գրուելով ծածկուեր է : Շրիտամնեան թանգարանին մէջ ֆիթեան կամ խնամակալի աղամանդին մէկ նմանցուցածը կայ , որուն արծըթէ շրջանակին վրայ փորուած են աս խօսքերս . “ Փիթ բերդապահի աղամանդին գաղափարն է . կշիռքը 136  $\frac{1}{2}$  քառաթի որ 1717<sup>th</sup> | ու գովիկոս ծեւ գընեց ’ի Պաղղիա , ” :

Անչի ըստած աղամանդը յիսունը հինգ քառաթի կը կշռէ , և 25,000 լիրէ ստերլին կ'արժէ : Կ աղամանդը Յանդուզն Լարողոսի Պուրկօյնի դքսինն էր , ու Յանսիի պատերազմին մէջ իր գլխարկին վրան էր . Լարողոս ան պատերազմին մէջ յաղթուելով հելուետիացի զինուոր մը պատերազմի աւարին մէջ գտաւ աս աղամանդը , ու քահանայի մը ծախեց մէկ Փիորինի , քահանան ալ ուրիշի մը ծախեց : 1589<sup>th</sup> աս աղամանդը | ուսիտանացոց Կատանիսութագաւորին քոյն էր , որ 40,000 լիրէի զրաւի զրաւ գաղղիացի աղնուականի մը քոյլ , որ Վանչի կ'ըսուեր , և ետքը 100,000 լիրէի ծախեց . Ճարիւր տարիի չափ միաց աղամանդը ան աղնուականին տունը , ինչուան որ Ճենդիկոս Դ Պաղղիոյ թագաւորաւթենէն իյնալով հելուետիացի զօրաց

1 Աս ան աղամանդը է որ Օւլով կոմսին ծախեց ըսպայեցի պարոն Շափրազը . տես Բաղման Համ . Ա . էջ 14 :



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԴԱՄԱՆԴՐԸ

Պատճենական

- 1 Ռաճա Մաթթանի ադամանդը .
- 2 Աւարիոյ գեղին ադամանդը .
- 3 Ռուսաց կայսեր գաւազանին ադամանդը .
- 4 Կասաքի ադամանդը .
- 5 Փիկոթի ադամանդը .
- 6 Անդղիոյ մեծ ադամանդը .

- 7 Անդղիոյ Գէորգ Դ թագաւորին ադամանդը .
- 8 Խնամակալի կամ Գաղղիոյ ադամանդը .
- 9 Տասուերկուբէնինչուան Լքառաթի մեծութեամբ ադամանդներ :

զօրագլխին (որ վերի յիշուած ազնուականին տնէն էր) հրամայեց որ Հելուետիա անցնի ու զօրք ժողվէ . և որովհետեւ ստըկի կարօտութիւն ունէին , հաւանեցուց զինքը որ ան ադամանդը իր ազգականներէն առնէ ու Հելուետիոյ տէրութեան քով զրաւի դնելով՝ զօրնաց թշակը վճարէ : Վամանդը հաւատարիմ մարդու մը ձեռքով խաւրեցին , բայց մարդը ճամբան անյայտ եղաւ . ատեն անցնելէն ետքը ձայն ելաւ թէ ճամբան աւազակները բւներ են ան մարդը , կողոպտեր սպաններ և անտառի մէջ թաղեր են : աս լելով Անչի , և ան մարդուն հաւատարմութեանը վրայ ալ վստահ ըլլալով՝ գնաց թաղուած տեղը վինտուեց զտաւ ու մարմինը դուրս հանեց , և ադամանդը ստամբսին մէջէն գտաւ , որ կ'երենայ թէ մարդը տեսնելով որ աւազակները վրան կը յարձրէ կին մէկէն կլլեր էր ադամանդը : Անչի ան ադամանդը տուաւ Խզգլից Հակոբ թագաւորին , որ ան ատենները Փարիզ կը բնակէր . անկէց ալ ու գովիկոս ԺԴէն անցաւ , և հիմա Գաղղիոյ թագաւորական գոհարներուն մէջն է :

Փիկոթ կոմս Հնդկաստանի կուսակալը ադամանդ մը բերաւ Խզգլիա՝ որ իր անունովը Փիկոթ ըստուեցաւ . ասի կայ 1801<sup>ին</sup> վիճակով ծախելու հանեցին 30,000 լիրէ ստերլինի . 47½ քառաթիվ կը կը էր . 1818<sup>ին</sup> Ուունտէլ և Պիրիշ ու ուրիշ Ուունտէլ անունով մարդկանց քովն էր , բայց թէ հիմա ուր է և որուն քով չգիտցուիր :

Կասաք ադամանդը Վահարաթի պատերազմին մէջ՝ Վահարաթայ եպարքոսէն աւար առին . և հիմա արևելեան Հնդկաստանի ընկերութեան գարանին մէջն է . կշուքն է 89  $\frac{3}{4}$  քառաթի , և Հնդկաստանի վաճառականաց ժողովքը անոր գին որոշեր է 30,000 լիրէ ստերլին :

Ուուսաց գանձատունը կայսերական զաւազանին վրայի ադամանդէն զատ ուրիշ մեծ ադամանդներ ալ կան . անոնցմէ մէկուն գինը 369,800 լիրէ ստերլին կը սեպուի :

Հոլմանտա ադամանդ մը կայ 36 քառաթի կշիռքով , և արժեքը 10,368 լիրէ ստերլին կրաեպուի , և կարծեմ թէ կոնոնաձեւ է :

Պարաից թագաւորին գանձատունն ալ ադամանդներ կան , որոնցմէ չորս մեծերը վարդաձեւ կտրուած են , ուրիշներն ալ շողջողենի ձեռվ : Ամենէն մեծերէն երկուքը կ'ըսուին Հանլ լուսէղին և Լէտոն լուսաճաճանչ . մէկուն գինը կը սեպուի 145,800 լիրէ ստերլին , մէկալինը 34,848 :

Պրազիլի գանձուն մէջ շատ գեղեցիկ ու մեծ ադամանդներ կան , ինչպէս ու սիտանեան կլոր շողջողենին , Ատրիկի ադամանդ ըսուածը , և այն : Լապոյտ գունով ադամանդներ ալ կան , բայց այն շափ մեծ չեն , և շատը բիծ ունին : Հովհաննէս Դ թագաւորին գաւազանին ոսկիապատ գլխուն վրայ բրգաձեւ շողջողենի ադամանդ մը կայ շատ գեղեցիկ , որ կ'արժէ 30,000 լիրէ ստերլին : Ու սիտանացւոց կամ Շորթուգալի Հովհաննէսի Ա թագաւորին մետաքսէ ուրարին վրայ քսան հատ շողջողենի ադամանդներէ կոճակներ կային , որոնց ամենուն մէկէն գինը 100,000 լիրէ ստերլինի կը համնէր :

Կափուլէն 8,000 լիրէ ստերլինի Լիասոնէն շողջողենի ադամանդ մը գներէ մատնիի վրայ անցուցած , որ կը կը էղեր 34 քառաթի . բայց ասիկայ առաջին կարգի ընտիր ադամանդներէն չէ :

Ալ պատմեն թէ երբոր մեծն Պետրոս (Սմանցւոցմէ պաշարուեր էր բոլոր քանակովը , իր թագուհւոյն փալփուն ու աջք առնող ադամանդովը վտանգէն ազատեցաւ : Փոթեմքին անունով իշխանն ալ իր ծերութեան վիշտերը թէթեցընելու համար՝ մեծագին ադամանդի մը փայլունութեանը վրան նայելով սիրտը կը բացուի ու կը միսիթ արտի եղեր :